# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից Ալբանիայի Տիրանա քաղաքում կազմակերպված տարածաշրջանային սեմինարի վերաբերյալ***

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ Արտակ Սարգսյանը մասնակցել է «Կոռուպցիայի կանխարգելում և Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի միտումներն և հաջողված փորձի օրինակները» սեմինարին, որը տեղի է ունեցել Ալբանիայի Տիրանա քաղաքում, 2014 թվականի հունիսի 26-ից 27-ը:

Սեմինարը կազմակերպվել էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Հակակոռուպցիոն ցանցի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Եվրոպայի և ԱՊՀ տարածաշրջանային բյուրոյի ու ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի կողմից՝ Ալբանիայի Տեղական հարցերով պետական նախարարի, Հակակոռուպցիոն հարցերով ազգային համակարգողի և Պետական կառավարման և նորարարության պետական նախարարի աջակցությամբ: Միջոցառմանը մասնակցել են 25 երկրների կոռուպցիայի կանխարգելման պատասխանատուներ և ընտրված հասարարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Արևելյան Եվրոպայից, Կենտրոնական Ասիայից և այլ երկրներից: Սեմինարը հնարավորություն է ընձեռել քննարկելու կոռուպցիայի կանխարգելման համաշխարհային միտումներն ու խնդիրները, կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ գործիքների և դրանց կիրառման լավագույն փորձը, ինչպես նաև քաղաքացիական հասարարակության դերը այդ գործընթացում: Սեմինարի

ընթացքում իրենց փորձը ներկայացրեցին Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի և Ղազախստանի ներկայացուցիչները: Վրաստանը ներկայացրեց «Հանրային ծառայության սրահ», Ադրբեջանը՝ «Ասսան» գաղափարների իրականացման փորձը, Հայաստանը՝ «Կարգավորիչ գիլյոտին ծրագիրը Հայաստանում» ծրագրի իրականացման արդյունքները, իսկ Ղազախստանի քաղաքացիական հարարակության ներկայացուցիչը՝ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ արդյունավետ հասարակական վերահսկողություն իրականացնելու հաջողված փորձը:

Վրաստանի «Հանրային ծառայության սրահ» գաղափարի շրջանակներում մեկ հարկի տակ են միավորվում պետական բոլոր մարմինները, որոնք գործ ունեն քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց փաստաթղթեր, թույլտվություններ և լիցենզիաներ տրամադրելու, պետական գրանցումներ կատարելու հետ: Քաղաքացին գնալով այդպիսի տուն կարող է, օրինակ, դիմել արխիվ՝ կորցրած փաստաղթղի պատճենը տրամադրելու խնդրանքով, միաժամանակ պահանջելով կատարել դրա նոտարական կարգով վավերացված թարգմանությունը:Առավել մանրամասն ինֆորմացիան զետեղված է [http://psh.gov.ge/](http://psh.gov.ge/) կայքէջում:

Ադրբեջանի «Ասսան» գաղափարը նույնական է վրացական գաղափարին, սակայն այս դեպքում հիմնականում մեկ հարկի տակ են միավորվել քաղաքացիական կացության, սոցիալական ապահովության և ոստիկանության անձնագրային և վարորդական իրավունք տրամադրող բաժանմունքերը, նոտարական գրասենյակները, պետական և հողային ռեգիստրները: Հետաքրքիր և ուսանելի էր«Մոբիլ Ասսան» կայանների ստեղծումը. ձեռք էին բերվել ավտոբուսներ, որոնք կահավորվել էին տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց, ինչպես նաև հեռավոր գյուղերում գտնվող անձանց ծառայություններ մատուցելու նպատակով: Առավել մանրամասն ինֆորմացիան զետեղված է [http://www.asan.gov.az/](http://www.asan.gov.az/) կայքէջում:

Ըստ էության, երկու պետություններում կիրառվող մոդելները մոտ են Հայաստանում կիրառվող մեկ պատուհանի գաղափարին, սակայն մատուցվող ծառայությունների ավելի մեծ փաթեթ են տրամադրվում և ավելի կարճ ժամկետներում, հատկապես՝ Վրաստանում:

Սեմինարի 2-րդ օրը մասնակիցները բաժանվեցին 3 խմբերի, որոնց տրվեցին պրակտիկ խնդիրներ՝ պետական կառավարման բնագավառում կոռուպցիայի աստիճանի և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման արդյունավետ մեխանիզմների կիրառման վերաբերյալ: